«04» դեկտեմբերի 2025թ.

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) և «Ճաննախագիծ» ինստիտուտ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 2060-Ն որոշման 12-րդ հավելվածի 9-րդ կետի պահանջները և հաշվի առնելով, որ 04.03.2025թ. կնքված թիվ ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2025/5Հ պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) չափաբաժին 2-ով նախատեսված S-1-33,Կոշ(S-1-8)-Վերին Սասունիկ-Լեռնարոտ տեղական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ9+500 հատվածի հիմնանորոգման աշխատանքների իրականացման ընթացքում ի հայտ են եկել մի շարք խնդիրները, կապված այլ ենթակառուցվածքների (էլեկտրական սյուներ, կոյուղագծեր, ջրագծեր) վերատեղադրման, նորոգման կամ տեղափոխման հետ և այդ խնդիրներով պայմանավորված ճանապարհի որոշ հատվածներում նախատեսված աշխատանքները ձգձգվել են և սահմանված ժամկետներում չեն իրականացվել, ինչը նպաստել է աշխատանքների կատարման ժամկետի, այդ աշխատանքների մասով, երկարաձգման, իսկ ներկայիս եղանակային պայմանները արդեն իսկ հնարավորություն չեն տալիս շարունակել ասֆալտապատման աշխատանքները՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 28-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերի 462-րդ կետի պահանջները, համաձայն որի օրգանական կապակցանյութերով ամրացված գրունտներից հիմքերն ու ծածկերը թույլատրվում է տեղադրել չոր եղանակին, օդի 100 C-ից բարձր ջերմաստիճանի պայմաններում, ինչպես նաև այն, որ տվյալ շինարարական աշխատանքները իրականացնող կապալառուի հետ 04.12.2025թ.-ին կնքվել է 452,875,100.0 հազ. ՀՀ դրամ գումարի չափով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նվազեցնելու մասին համաձայնություն, ուստի նկատի ունենալով, որ վերոհիշյալ շինարարական աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունները մատուցվում են «Ճաննախագիծ» ինստիտուտ» ՍՊԸ-ի կողմից, Կողմերը կնքեցին սույն համաձայնությունը հետևյալի մասին.

1. Պայմանագրով նախատեսված S-1-33,Կոշ(S-1-8)-Վերին Սասունիկ-Լեռնարոտ տեղական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ9+500 հատվածի հիմնանորոգման նկատմամբ հեղինակային հսկողության

ծառայությունների մատուցման համար սահմանված ընդհանուր գնից՝ 3,604,900.0 հազ. ՀՀ դրամի չափով գումարի նվազեցման նպատակով Պատվիրատուն ՀՀ կառավարության քննարկմանը կներկայացնի համապատասխան իրավական ակտի նախագիծ:

2. 04.12.2025թ.-ից Կատարողը կասեցնում է ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2025/5Հ պայմանագրի չափաբաժին 2-ով նախատեսված հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման գործընթացը՝ մինչև սույն համաձայնության 1-ին կետում նշված իրավական ակտի հաստատումը կամ դրա մերժումը:

3. Սույն համաձայնության 2-րդ կետով նախատեսված իրավական ակտն ՀՀ կառավարության կողմից հաստատվելուց հետո Կողմերը կձեռնարկեն համապատասխան միջոցներ Պայմանագրում այդ իրավական ակտին համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

4. Սույն համաձայնությունը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է 04.03.2025թ. կնքված թիվ ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2025/5Հ պայմանագրի անբաժանելի մասը:

5. Սույն համաձայնությունը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Պատվիրատու՝	Կապալառու՝
ՀՀ ՏԿԵՆ գլխավոր քարտուղար՝	«Ճաննախագիծ» ինստիտուտ» ՍՊԸ -ի տնօրեն
Ա.ԵՐԻՑՅԱՆ	Դ.ՔԱՐՏԱՇՅԱՆ